ՈՒՂԵՑՈՒՅՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կալիֆոռնիայի Նահանգի Անգլերեն Լեզվի Հմտության Քննություն (ELPAC)

Սա մի քննություն է, որը օգտագործվում է մանկապարտեզից մինչև 12-րդ դասարանի երեխաների անգլերեն լեզվի իմացությունը ստուգելու համար, եթե անգլերենը նրանց մայրենի լեզուն չէ: ELPAC քննությունը փոխարինում է Կալիֆոռնիայի Անգլերեն Լեզվի Զարգացման Քննությանը (CELDT): Այս քննության արդյունքները օգնում են ուսուցչին երեխային ճիշտ օգնություն ցույց տալու համար:



ELPAC –ը բաղկացած է 2 մասից.

	Սկզբնական քննություն	Ամփոփիչ քննություն
Ո՞վ	Աշակերտը կհանձնի սկզբնական քննություն, եթե. ▪ Աշակերտի մայրենի լեզուն անգլերեն լեզուն չէ ▪ Աշակերտը ոչ մի անգամ CELDT կամ ELPAC քննություն չի հանձնել ▪ Աշակերտը ոչ մի անգամ անգլերեն սովորող չի եղել անցյալում	Ամփոփիչ քննությունը տրվում է այն աշակերտներին, ովքեր սկզբնական քննությունը հանձնելուց հետո ճանաչվել են որպես անգլերեն սովորողներ:
Ի՞նչ	Սկզբնական քննությունից օգտվում են, որպեսզի գտնեն, թե արդյոք աշակերտը անգլերեն սովորող է, ում լրացուցիչ օգնություն է հարկավոր, թե նա արդեն սահունորեն է տիրապետում անգլերեն լեզվին:	Ամփոփիչ քննությունը օգտագործվում է անգլերեն սովորող աշակերտների հմտությունները չափելու համար: Քննական արդյունքները կօգնեն դպրոցին կամ դպրոցական շրջանին պարզելու, թե արդյո՞ք աշակերտը պատրաստ է վերադասակարգման:
Ե՞րբ	Սկզբնական քննությունը տրվում է աշակերտի արձանագրման առաջին 30 օրվա ընթացքում:	Ամփոփիչ քննությունը տրվում է անգլերեն սովորող աշակերտներին ամեն տարի գարնանը, փետրվարից մինչև մայիս ընկած ժամանակշրջանում, մինչև աշակերտի վերադասակարգվելը:
Ինչու՞	Շատ կարևոր է հայտնաբերել լրացուցիչ օգնության կարիք ունեցող անգլերեն սովորող աշակերտներին, որպեսզի նրանք հաջողության հասնեն և կարողանան օգտվել կրթական բոլոր ծրագրերից: Անգլրերեն սովորող բոլոր աշակերտները տարին մեկ անգամ կհանձնեն ELPAC քննույթունը, ամփոփելով նրանց կատարծ առաջընթացը:	

ELPAC քննությունը բաղկացած է 4 ոլորտից.

Արդյո՞ք անկարողունակություն ունեցող աշակերտները հանձնում են ELPAC քննությունը:
Այո, այս քննությունը այնպես է նախագծված, որ աշակերտները, ինչպես նաև հատուկ կարիքների տեր աշակերտները, կարողանան հանձնել այն և ցուցաբերել իրենց գիտելիքները: Դրա համար այս քննությունը ներ է առնում մատչելիության ռեսուրսներ, որոնք առնչվում են տեսողական, լսողական և ֆիզիկական խոչընդոտներին, թույլ տալով բոլոր աշակերտներին ցուցաբերել իրենց գիտելիքները:

Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ երեխային պատրաստվել ELPAC քննության:

Դուք կարևոր դեր եք խաղում ձեր երեխայի կրթության գործում: Ահա ինչ
կարող եք անել.

- Կարդացեք ձեր երեխայի համար կամ թող երեխան ինքը կարդա ձեզ
  համար անգլերեն լեզվով:
- Նկարների օգնությամբ թող երեխան անգլերեն լեզվով տա
  պատկերված նկարի նկարագիրը կամ նկարագրի բովանդակությունը:
- Հարցրեք երեխայի ուսուցչից, թե ո՞ր ոլորտում (լսել, խոսել, կարդալ, գրել) է երեխային օգնություն հարկավոր:
- Խոսեք քննության մասին երեխայի հետ: Համոզվեք, որ երեխան հասկանում է քննության կարևորությունը:

ELPAC-ը համապատասխանում է Կալիֆոռնիայի Անգլերեն Լեզվի Զարգացման Քննության Չափանիշներին: Այս չափանիշների հետ կարելի է ծանոթանալ
http://www.cde.ca.gov/sp/el/er/documents/eldstndspublication14.pdf կայքում:

Հավելյալ տեղեկությունների համար.

ELPAC –ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար հյուրընկալել Կալիֆոռնիայի Կրթական Գրասենյակի ELPAC կայքը http://www.cde.ca.gov/ta/.tg/ep կամ
ELPAC Կրթական Քննությունների Ծառայությունների կայք http://www.elpac.org

ELPAC քննության արդյունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն կարելի է ստանալ երեխայի ուսուցչից կամ դպրոցի գրասենյակից:

Accessible Alternative Version site, http://www.cde.ca.gov/ta/tg/ep/elpacparntinguide.asp